

## ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1970—1971 ուսումնական տարեշրջանի հոգևոր ճեմարանի շրջանավարտ սարկավագների՝ Սեզար Գոնտրալյանի, Ժիրայր Սիմոնյանի, Կտրիճ Ներսիսյանի, Արտաշես Մուշեղյանի և Տրդատ Շամլյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը և վկայականների հանձնումը:

Սույն հանդեսին ներկա են լինում՝ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Տիրան արքեպ. Ներսոյանը (ԱՄՆ) և պրոֆ. Հ. Ճ. Սիրունին (Բուխարեստ):

Հանդիսությանը ներկա են լինում նաև հոգևոր ճեմարանի ողջ դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը և հյուրեր:

Հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարվա շրջանավարտ ուսանողների ավարտաճառերը քննող հանձնաժողովը, որի կազմում էին դասախոսներ Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը, Սամվել Անթոսյանը և Գրիգոր Գյուլլանը, առանձին-առանձին մանրամասնորեն ծանոթացել էին ներկայացված ավարտաճառերի հետ և սույն թվականի սեպտեմբերի 25-ին, շաբաթ օրը, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանի նախագահությամբ գումարված հանձնաժողովի նիստում տվել էին իրենց գնահատականը և արել դիտողություններ:

Յուրաքանչյուր դիպլոմային աշխատանքի արժանիքների և թերությունների մասին ըստ պատշաճի ներկայացնում է քննող հանձնաժողովի համապատասխան մասնագիտության դասախոսը:

Այնուհետև խոսք է տրվում շրջանավարտ սարկավագներին, որոնցից յուրաքանչյուրը սեղմ գծերով ներկայացնում է իր կատարած աշխատանքը և պատասխանում հանձնաժողովի անդամների և ներկաների հարցերին:

Սեզար սրկ. Գոնտրալյանի ավարտաճառի նյութն է «5—11-րդ դարերի աղանդավորությունը ըստ հայ պատմագիրների», որը բաղկացած է առաջաբանից և հինգ գլուխներից, 70 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառը գնահատվում է «գերազանց»:

Ժիրայր սրկ. Սիմոնյանի ավարտաճառի նյութն է «Գրապայքարը», ուր շոշափվում է անցյալ դարի երկրորդ կեսին մեր ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածներում աշխարհաբար լեզվի պայքարը գրաբարի դեմ: Շարադրանքը բաղկացած է առաջաբանից և յոթ գլուխներից, 43 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառը գնահատվում է «գերազանց»:

Կտրիճ սրկ. Ներսիսյանի ավարտաճառի նյութն է «Եղիշե արքեպ. Դուրյանի կյանքը և գործունեությունը», որը բաղկացած է առաջաբանից և վեց գլուխներից, 48 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառը գնահատվում է «գերազանց»:

Արտաշես սրկ. Մուշեղյանի ավարտաճառի նյութն է «Հայ տոմարագիտության պատմությունը և Սիմեոն Երևանցու տոմարագիտական գործունեությունը», որը բաղկացած է առաջաբանից և չորս գլուխներից, 78 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառը գնահատվում է «գերազանց»:

Տրդատ սրկ. Ճամլյանի ավարտաճառի նյութն է «Սուրբ Սարգիս Շնորհալի» («Գիրք մեկնութեան եօթն թղթոցն կաթողիկէից»), որը բաղկացած է առաջաբանից և երեք գլուխներից, 52 մեքենագրված էջ ծավալով:

Ավարտաճառը գնահատվում է «լավ»:

Ապա հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը ամփոփում է ավարտաճառերի գրավոր և բանավոր պաշտպանության արդյունքները և խնդրում Վեհափառ Հայրապետին՝ տալ Իր օրհնությունը և հանձնել դիպլոմները:

Բարեշնորհ շրջանավարտ սարկավագները հերթով համբուրում են Վեհափառ Հայրապետի աջը և ծափահարությունների ներքո ստանում իրենց դիպլոմները:

Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և տալիս Իր հայրական հորդորներն ու խրատները, շնորհավորում նրանց և այս ուրախ առիթով յուրաքանչյուրին նվիրում մեկական ժամացույց, որպեսզի նրանք գիտենան հարգել ժամանակը:

Սույն երջանիկ առիթով բարեշնորհ սարկավագներին շնորհավորում է նաև «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, ցանկանում, որ նրանք դառնան հայ առաքելական եկեղեցու սպասավորներ, մեր ժողովրդի հոգևոր ծառայության նվիրված արժանավոր մշակներ և այսուհետև ևս շարունակեն իրենց պրպտումները հայ մշակույթի անդաստանում: